

ՄԵՍՐՈՊ ԱՂԱԶՐԱՂՅԱՆՑԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ

1880 թ. Վենետիկի Ս. Ղազար վանքում մեծ հանդիսավորությամբ նշվել է Ղ. Ալիշանի քահանայության հիսնամյակը: Այդ առթիվ «Տարագ» շաբաթաթերթում Ղ. Աղայանը հրատարակել է «Հայր Ղևոնդ Ալիշան» փոքրածավալ հոդվածը, ուր Մխիթարյան միաբանության մասին մասնավորապես ասված է. «Որքան մեզ հայտնի է, թե՛ հայ-լատինականությունը ե. թե՛ հայ բողոքականությունը թշնամի է դիտությունը, դեղարվեստին, ճարտարապետությունը, բանաստեղծությունը: Այդպես չեն եղել Մխիթարյան հարք սկսած Մխիթար Աբբա հորից: Նրանք այնքան են աշխատել հայ ազգի և նրա դրականության համար, որքան չեն աշխատել Հայոց բոլոր վանքերը միասին առած»¹ (ընդգծումը մերն է – Ա. Փ.):

Ավելին հնարավոր չէր ասել: Իրոք որ Մխիթարյանների տված դիտագրական հունձքը, հատկապես XVIII–XIX դդ., իր նախադեպը չունեցող դարմանահարչ մի երևույթ է, որի դիտական ուսումնասիրությունը սկզբնավորվել է հիշյալ միաբանության հիմնադիր, երջանկահիշատակ Մխիթար Սեբաստացու (1676–1749) մահվանից անմիջապես հետո:

Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության ոչ բոլոր գործիչներն են թողել դիտական ծանրակշիռ ժառանգություն: Իր գոյություն շուրջ 300-ամյա գործունեության ընթացքում Վենետիկի Մխիթարյան միաբանությունն ունեցել է մոտ 400 անդամ, որոնցից, մեր մոտավոր հաշվումներով, միայն յոթանասուն-ութսունն են առավել նշանակալից հետք թողել դիտության, կրթության և մշակույթի բնագավառներում: Դրանց մեջ իր արժանի տեղն ունի Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Մեսրոպ Աղաչըրաղյանցը՝ բնագետ, փիլիսոփա, թարգմանիչ և մանկավարժ:

Մ. Աղաչըրաղյանցը ծնվել է 1769 թ. Կ. Պոլսում: Կրթությունն ստացել է Վենետիկի Ս. Ղազար կղզու վանքում, ուր և 1791-ին դարձել է միաբանության անդամ: 1795 թ. շուրջ մեկ տասնամյակ Տյուզյան ամիրայական ընտանիքի նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Օսմանյան կայսրության ֆինանսների նախարար Հովհաննես Չելեբի Տյուզյանի (1774–1819) որդու՝ Հակոբի դաստիարակ ուսուցիչն էր²: Այդ տարիներին Պոլսում հիմնել է քիմիայի և հանքաբանության թանգարան-լաբորատորիաներ. «Նա շնորհիվ իր ուսումնասիր հանճարին և իր Մեկենասներու տեղացող ոսկուն ու խրախուսանքին Քիմիականության և Հանքաբանության այնպիսի թանգարաններ և գործարաններ (laboratories) հորինած էր, ժամանակին

¹ Ղ. Աղայան. Երկեր երեք հատորով. հ. 3, Երևան, 1940, էջ 333:

² Բ. Սարգիսյան. Երկհարիւրամեայ գրականական գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան. Վենետիկ, 1905, էջ 350:

կատարելագործված ճոխ գործիններով և բովերով, որուն վրա եվրոպացիք իսկ կզարմանային: Եվ այդ հարմար պարագաներուն մեջ է՝ որ կ'ըներ գիտնական փորձեր և գյուտեր»³: Կ. Պոլսում Մ. Աղաչրաղյանցի կատարած դիտական գործունեության և իրականացրած գյուտերի մասին «Տյուզյանք ուրախությամբ կը փութացնեին ներկայացնել Սուլթանին»⁴:

Վենետիկի Մխիթարյան միաբանության երևելի գործիչներից մեկը՝ Հ. Ղուկաս Ինճիճյանը, 1802 թ. հունիսի 10-ին Ս. Ղազար ուղարկած իր նամակում ահա թե ինչպես է ներկայացրել Մ. Աղաչրաղյանցի կատարած բնագիտական գործունեությունը Կ. Պոլսում. «Քանզի գիտ և գործարան նորա ոչ է լուկ մինէի, այլ գրեթէ ամենայն հանքաց. զոր պարտ է կոչել բովք վասն լրացեալ գործոց. յերրորդումն՝ բովք վասն առաջին նիւթոց, վասն լամտի...ցանելոյ, և այլն: Այս ամենայն բազում արուեստիւ են շինեալ, ուր չիք գործածութիւն փքոյ, այլ հրոյն գորութեամբ և արտաքին օգոյ շարժմամբ փչել տայ զհուրն սաստկագոյն քան զփուքս Առսէնալին Վենետիկոյ: Զմայելցոյց զիս իւրովք փորձիւք, առնելով առաջի իմ փորձս կազից, և այլն, և այլն»⁵:

Հայազգի բնագետի գիտական գործունեությունը լավագույնս գնահատվել է Եվրոպայում: 1810 թ. նա ընտրվել է Ճրանսիայի հանքաբանության կայսերական խորհրդի անգամ: Մ. Աղաչրաղյանցը հայ հոգևոր դասից առաջիններից մեկն է, որ արժանացել է նմանօրինակ բարձր տիտղոսի⁶:

Մոսկվայի Լազարյան ճեմարանի հիմնադիր Հովակիմ Աղազարի Լազարյանը (1743–1826) Մ. Աղաչրաղյանցին հրավիրել է որպես մաթեմատիկայի ուսուցիչ, սակայն ինչ-ինչ պատճառներով հրավերը չի ընդունվել. «Հետո ալ Աղեքսանգր Ա Կայսեր օրով՝ տերության և Լազարյան Հովակիմ Աղայի կողմեն գրված նամակներով կը հրավիրվեր-իրը և ուսուցիչ վերոհիշյալ գիտությանց-Լազարյան բարձրագույն ձեմարանը վարելու. բայց պարագաները կ'արգիլեին զինք հոն երթալու»⁷:

Հարկ է նշել, որ Լազարյան ճեմարանի հիմնադրման ժամանակ (1814) Հովակիմ Լազարյանը, քաջ գիտակցելով Մխիթարյան միաբանության հզոր գիտական ներուժը, նամակներով գիմել է այնտեղից մանկավարժներ հրավիրելու ակնկալիքով. «Թուսահայաստանում հարմար ուսուցիչներ չգտնելով Հովակիմ Լազարյանն իր հայացքը հառում է Մխիթարյաննե-

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 351:

⁶ Մինչև XIX դ. առաջին քառորդը գիտական աստիճանի և կոչման են արժանացել ներքոհիշյալ հոգևոր գործիչները՝ Թովմաս Վանանդեցի Նուրիջանյան (մոտ. 1617–1708)՝ Օքսֆորդի համալսարանի աստվածաբանության դոկտոր, լեհահայ Միլիփոր Ստեֆանովիչ (?–1638)՝ Կոակովի ակադեմիայի աստվածաբանության և փիլիսոփայության դոկտոր, լեհահայ Ստեփանոս Ռոչքա (1670–1739)՝ փիլիսոփայության և աստվածաբանության դոկտոր, հունգարահայ Հովհաննես Կարաչոնի (1726–1814)՝ աստվածաբանության ու փիլիսոփայության դոկտոր, լեհահայ Գոթգոթ Պիրամովիչ (1735–1801)՝ աստվածաբանության դոկտոր, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներ Մկրտիչ Ավդերյան (1726–1854)՝ Հռոմի Հնագիտական ընկերության անդամ, Իգնատիոս Փափազյան (1764–1852)՝ Հռոմի Գեղարվեստի ակադեմիայի անդամ (տե՛ս Ա. Փ ա շ ա ն. Տիտղոսակիր Հայեր, XV–XIX դարեր. Երևան, 2001):

⁷ Բ. Ս ա Ր գ ի ս ե ա ն. Նշվ. աշխ., էջ 351:

րին»⁸: Ավելացնենք նաև, որ Լազարյան ճեմարանի առաջին ռեկտոր Հարություն Ալամդարյանից հետո 1815-ին կրթօջախի երկրորդ ռեկտոր է նշանակվել Սերովբե վարդապետ Կարնեցին, որն «իր կրթությունն ստացել էր Եվրոպայում, Վենետիկի Մխիթարյան միաբանությունում, գիտեր եվրոպական լեզուներ, լավատեղյակ էր հայ և եվրոպական մատենագիտությանը, երաժշտությանը»⁹:

Մ. Աղաչրադյանցը մահացել է 1845-ին, Վենետիկում: Ծավալով մեծ է նրա գիտական ժառանգությունը: Վենետիկում 1819-ին լույս է ընծայել «Բնական օրէնք կամ կրթութիւն առ ի լինել բարի եւ պարկեշտ քաղաքացի» (այսուհետև՝ «Բնական օրէնք»), 1830-ին՝ «Համառօտ արուեստաբանութիւն եւ նորանոր հնարք» (այսուհետև՝ «Համառօտ արուեստաբանութիւն») զուտ բնագիտական ուսումնասիրությունը: 1845-ին Վենետիկում գրաբար հրատարակվել է Ֆրանսիացի փիլիսոփա և տրամաբան Դ. Մարսելի «Համառօտ տրամաբանութիւն» գիրքը՝ Մ. Աղաչրադյանցի թարգմանությամբ:

Անչափ մեծ է, սակայն, Մխիթարյան միաբանության այդ տիտղոսակիր վարդապետի թողած գիտական ժառանգության արժեքը հայ բնագիտությունից բազմադարյան պատմության էջերում: Այս առումով նախ անդադառանք Մ. Աղաչրադյանցի՝ աշխարհաբարով լույս ընծայած 244 էջանոց «Համառօտ արուեստաբանութիւն» մենագրությունը: Գրքի տիտղոսաթերթերում գրված է. «Տեսուն Մեսրոպայ վարդապետի Աղաչրադեանց կոստանդնուպոլսեցոյ ընկերակցի ճեմարանին Եւրոպիոյ»¹⁰:

Մինչև «Համառօտ արուեստաբանութիւն» գրքի լույս տեսնելը, նման ծավալով աշխարհաբարով բնագիտական գիրք լույս չի տեսել¹¹: Այս իմաստով Մ. Աղաչրադյանցը հիրավի գիտական սխրանք է կատարել. «Մեր ազգին մեծ մասը արհեստավոր է, կալվածք չունի ինչով ապրի, ապա իրավունք ունի ասանկ ըսելու. զի գիտություն համն ալ կատարյալ առած է: Ինչպես գիտությունը իր արհեստին մեջն ալ գործածելու կերպը և հարկավորությունը գիտնա, ասոր համար հագիվ որ մենծցերե տղան՝ շուտով կերթա շուկան: Այսինքն՝ չարչին արհեստավոր վարպետի մոտ: Ո՞րչափ պարապ ատեն կանցնե՞ մինչ որ խելքը հակե, լավ չէ՞ր ըլլար որ կարգալու մեջ ուշանար և դպրատան մեջ արհեստական գիտություն կարդալով և անանկ փորձեր տեսնալով վարժեր միտքը»¹²:

«Համառօտ արուեստաբանութիւնը» 17 գլուխներից է՝ «պարափզական հնարք եւ դարմանք, երկրագործական հնարք, գիւղական անտեսութիւն,

⁸ Ա. Ի գ ն ա տ յ ա ն. Լազարյան ճեմարան. Երևան, 1969, էջ 160:

⁹ Նույն տեղում, էջ 168:

¹⁰ Բերված՝ «ընկերակցի ճեմարանին Եւրոպիոյ» արտահայտությունը ակնարկում է Մ. Աղաչրադյանցի Ֆրանսիայի հանքաբանության կայսերական խորհրդի անդամ լինելը:

¹¹ 1788 թ. Վենետիկում աշխարհաբարով լույս է տեսել Վենետիկի Մխիթարյան միաբանության անգամ ինչատուր Սյուրմելյանի (1751–1827) «Համառօտ թուրքաբանութիւն աշխարհաբար» 160 էջանոց աշխատությունը: Սակայն թվաբանությունը, ինչպես և բժշկագիտությունը բնական գիտություններ չեն, քանի ոչ չեն ուսումնասիրում բնական երևույթները (տես՝ Հայկական սովետական հանրագիտարան. հ. 2, Երևան, 1976, էջ 486): Այլ մանրամասներ տես Չ. Դ ա վ թ յ ա ն. Աշխարհաբար գիրքը հայ սպագրություն սկզբից մինչև 1850 թվականը. Երևան, 1964:

¹² Մ. Ա ղ ա չ Ր ա դ յ ա ն ց. Համառօտ արուեստաբանութիւն. Վենետիկ, 1830, էջ 6:

տնական տնտեսութիւն, ոսկերչական հնարք, ճիւղայի վերաբերեալ հնարքներ, հալոցական այսինքն տէօքմէճիի եւ լեհիմի հնարքներ, հրարուեստական հնարք, հիւանական հնարք, արուեստք կազմութեան եւ գործածութեան ջնարակի կամ վէոնիճի, նկարչութեան վերաբերեալ գոյնք, պատկերահանման հնարք, գրագրական և տպագրական հնարք, ոսկրագործական հնարք, հայելիագործութիւն, ճերմակ երկըթի թերթ շինել, նմանցնել թուղթը մետաքսին, ճերմկցնել կարմիր քացախը»։ Գրքի 199–244 էջերը նվիրված են պղնձի և արուելրի ոսկեգօծմանը։

Նախ գրքի լեզվի մասին։ Աշխարհաբար արևմտահայերենով գրված այս գործում բավականին շատ են թուրքերեն բառերը, որոնք միշտ վերցված են փակագծի մեջ։ Պատճառը հասկանալի է։ Միայն Կ. Պոլսում և Օսմանյան կայսրութեան այլ քաղաքներում, ուր գործում էին հայ արհեստավորները, հայերի թվաքանակը XIX դ. առաջին կեսին անցնում էր երկու միլիոնից, որոնց մի զգալի մասը թուրքախոս էր։ Բերենք թուրքերեն մի քանի բառեր՝ հայերեն համարժեքով. շիբի (պաղլեղ), չամուռ (ցեխ), սահաթճի (ժամագործ), ուքը (օղի), քաղան (կաթսա), ֆիթիլ (պատրույգ), քալըփի (կաղապար), գուրշին (կապար), գունտք (մկնգեղ), զարչաֆ (սավան), աթեշ (կրակ), քյուքյուրտ (ծծումբ), զամք (խեժ), ժիվա (սնդիկ), քաղայ (անագ), քեղապ (ժանտաջուր), բոմզա (աղնգաքար), թյուլֆենկ (հրացան), քիրեճ (կիր)։

«Համառօտ արուեստաբանութիւնում» զգալի են քիմիային և քիմիական տարաբնույթ տեխնոլոգիային նվիրված էջեր։ Այլ կերպ լինել չէր կարող։ Գործնական արհեստների մեծ մասը ինչ-որ տեղ պարտական են քիմիայի հաջողութիւններին։ Նշենք նաև, որ ոչ վաղ անցյալում քիմիան Հենց արհեստ-գիտութիւն էր։ Խոսելով քիմիական գիտութեան մասին, Աղաչրազյանցը պատմական որոշ տեղեկութիւններ է տվել քիմիայի անցած ուղու մասին։ Քիմիայի հայրենիքը համարելով Եգիպտոսը, հեղինակը նշել է նաև, որ եգիպտացիք խնամքով թաքցրել են իրենց գիտելիքները. «Երբ որ հույները գացին Հին աստենը Եգիպտոս՝ միայն մաթեմատիկական և աստղաբաշխական գիտութիւններ սորվեցան, և չիսորվեցան արհեստական գաղտնիքներ. զի եգիպտացիները ծածուկ կը պահէին զքիմիական և զբնարան գիտութիւնը ուրիշ աղգերեն»¹³։

«Համառօտ արուեստաբանութիւնում» բավականին շատ են այս կամ այն գիտութեան կամ արհեստին առնչվող պատմական տեղեկութիւններ՝ հանգամանք, որը գրքին տալիս է մի նոր որակ։ Այսպես, խոսելով հնգիկների գործնական գիտելիքների մասին, նա մասնավորապես նշել է. «Տես Հնգաստանցոց գունները կամ գունավոր բաները և որչափ ալ գեղեցիկ և բարակ (այստեղ՝ նուրբ իմաստով — Ա.Փ) արհեստների տերն են, կհետևի թե ասոնք ժամանակավ պայծառ ազգ են եզեր, և քաջ քիմիագետ»¹⁴։

Օտար ափերում ապրած և ստեղծագործած Մ. Աղաչրազյանցը ցավով է նշել պատմական այն իրողութիւնները, որ բնական գիտութիւնների հանդեպ մեծ չէ հայ ուսանողների սերը. «Շատոնց կուզեի մեր ազգին մեջը մեկ նոր եռանդ մը, այսինքն հավեսմը գիտութիւն ձգել, բայց տեսա

¹³ Նույն տեղում, էջ 4։

¹⁴ Նույն տեղում։

որ շատերը մեր ազգին անօգուտ բան մը կըսեպեն գիտութիւնը, ինչպես որ լսեցի աշակերտիս մեկէն երկրաչափութիւն գաս տալնիքն: Վարդապետ, ըսավ ինձի, աս եռանկյունս ցըցնեմ նե՛ հաց կուտա՞ն ընծի: Եվ ես ըսի ոչ, ապա գոցեց գիրքը և ալ չառավ ձեռքը: Աս խոսքս քանի որ գնաց մտավ ինձի»¹⁵:

Մ. Աղաչրաղյանցը երանությամբ է խոսել այն ժողովուրդների մասին, որոնք անկախ և ազատ հայրենիք ունեն ու իրենք են տնօրինում իրենց սեփական բախտը. «Երանի ժողովրդայն, որոնց մեծերը կամ իշխանները հոգ ու ջանք ունին գիտութիւններ և արհեստներ ծաղկեցնել իրենց ազգին՝ մեջը, ասանկները չէ թե իշխան են միայն՝ հապա լույս են, արեգակ են, և ամենայն պատվո և փառաց արժանի»¹⁶:

Ավելացնենք նաև, որ Մ. Աղաչրաղյանցի «Համառօտ արուեստաբանութիւն» գրքի լույս տեսնելուց 40 տարի անց, 1870-ին Վենետիկում լույս է տեսել Վենետիկի Մխիթարյան միաբանության հանրագիտակ Մանվել Քաջունու գրաբարով դրված եռահատոր «Տարաբանութիւն տեսական և արուեստական» աշխատութիւնը:

«Բնական օրէնք» մենագրութիւնը դրված է հարց ու պատասխանի ձևով: Այն փիլիսոփայական յուրօրինակ մի երկ է, որտեղ ուղենշային է հասարակութիւնում մարդու ազատ, անկախ ապրելու բնական իրավունքը: Ըստ Մ. Աղաչրաղյանցի, մարգիկ «Հավասար ստեղծած և նման են մեկը մեկու, հետեւաբար ալ անկախ ազատ են մեկզմեկե»¹⁷:

XIX դ. առաջին քառորդում Մ. Աղաչրաղյանցը հասարակության զարգացումը հիմնականում պայմանավորել է մարդու բնական և բարոյական կատարելագործմամբ: Ըստ նրա, մարդու բարձր առաքինութիւնն ու բարոյական անբասիր նկարագիրը ցանկացած օրենքների անխափան գործունեութեան գրավականն է. «Համառօտ սկզբունք բնական բարոյականութեան, որ է հիմն ամեն բանավոր օրենքներուն»¹⁸: Հետևելով Ֆրանսիացի լուսավորիչ, փիլիսոփա և մանկավարժ Ժան-ժակ Ռուսոյին (1712–1778)՝ Մ. Աղաչրաղյանցը ևս հավաստում է, որ հասարակութիւնը մարդկանց միջև ակնհայտ կամ ինչ-որ ձևով քողարկված յուրօրինակ մի միութիւն է, որի վերջնական նպատակը այդ մարդկանց մասնավոր և ընդհանուր շահերի պահպանումն ու հետագա ամրապնդումն է: Հատկանշական է Մ. Աղաչրաղյանցի այն գիտարկումը, որ մարդը, մուտք գործելով հասարակական կյանք, չի կորցնում իր բնական իրավունքները, ազատութիւնը և ամենակարևորը՝ անկախութիւնը: Այստեղ, սակայն, նա պայման է գնում. հասարակութեան յուրաքանչյուր անգամ արգարութիւն պահանջելու իր իրավունքն ունի: Մ. Աղաչրաղյանցի վերջին գործը 1849-ին Վենետիկում նրա գրաբար թարգմանութեամբ լույս տեսած Ֆրանսիացի փիլիսոփա և տրամաբան Դ. Մարսեի «Համառօտ տրամաբանութիւն» 96 էջանոց աշխատութիւնն է: XIX դ. տրամաբանութիւն գիտութեանն առնչվող հայերեն թարգմանական գրականութիւնը բավականին շատ է և դրա մեջ իր ու-

¹⁵ Նույն տեղում, էջ 10:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Մ. Աղաչրաղյանց. Բնական օրէնք. Վենետիկ, 1819, էջ 125:

¹⁸ Նույն տեղում, էջ 12:

րույն տեղն ունի Մ. Աղաչրաղյանցի կատարած թարգմանությունը. «Հայերեն լեզվով թարգմանվում է մեծ քանակությամբ գրականություն ֆրանսիական, անգլիական, իտալական, մասամբ էլ ռուսական տրամաբանական մտքից: Եղած տվյալների թիվը հասնում է մոտ 35-ի, որոնցից նշանավոր են Թ. Թրուզի «Վարքապետին տրամաբանությունը» (1856), Ֆր. Սոավելի «Արուեստ բանականը» (1845), Դ. Մարսեի «Համառոտ տրամաբանությունը» (1845), Լ. Թովմասի, Լքլերի «Ուսման տրամաբանությունը» (1869), Ա. Գովգինի «Տրամաբանությունը» և այլն: Նշված հեղինակների աշխատությունները երկար ժամանակ ծառայել են որպես դպրոցական դասագիրք, որոնց վրա հենվելով էլ հայ մանկավարժներից շատերը դասավանդել են տրամաբանությունը»¹⁹:

Գրքի առաջաբանում ահա թե ինչպես է թարգմանիչը հիմնավորել այդ երկը հայերենով հրատարակելու անհրաժեշտությունը. «Ի դարգացումն և ի յառաջատու թիւն աշխարհույ բազմաշահ արուեստի յօժարեցաք և մեք լինել մերովսանն ձեռնտու, յեղեալ ի մերս բարբառ զհամառոտ Տրամաբանութիւն Տիւ Մարսէի գաղիացվոյ. և ակն ունիմք զի և համբառով գերահռչակ առնն ներողամիտ ընդունելութեան ազգիս եղիցի սա արժանի»:

Մխիթարյան միաբանության հրատարակություններում, բացի վերը հիշատակված Բ. Սարգիսյանի տված կարծիքից, Մ. Աղաչրաղյանցի կյանքը և գիտական գործունեությունը հավուր պատշաճի մեկնաբանված է: Ավելին, Բ. Սարգիսյանի՝ 1905 թ. լույս տեսած աշխատությունից հետո կարծես թե մոռացություն է տրվել այդ երևելի գործչի անունը: 1966 թ. Վենետիկում լույս տեսած «Սուրբ Ղազար: Մայրավանք Մխիթարեան միաբանութեան» 165 էջանոց գրքում Մխիթարյան բնագետների մասին խոսելիս մեկ տող անգամ չկա Մ. Աղաչրաղյանցի մասին. «Այս գծին վրա (ակնարկում է բնական գիտությունները – Ա. Փ) բազմաթիվ են անունները Մխիթարյան Հայերուն, ինչպես է Հ. Սահակ Պարոնյան (1749–1806), Հ. Խ. Սյուրմեյան (1751–1827), Հ. Իգնատիոս Փափաղյան (1764–1852), Հ. Ղուկաս Ուլլուխյան (1742–1830), Հ. Հմայակ Պապիկյան (1827–1880), Հ. Մեսրոպ Սահակյան (1852–1918): Մեծագույն գեմք, սակայն, եղավ Հ. Մանվել Քաջունի»²⁰: Հիշյալ գրքում ներկայացված են Վենետիկի Մխիթարյան միաբանության 41 երևելի գործիչների համառոտ կենսագրականները, ուր գարձյալ բացակայում է Մ. Աղաչրաղյանցի կենսագրականը:

Խորհրդային Հայաստանում Մ. Աղաչրաղյանցի անձին ու գործունեությունը առաջին անգամ անգրադարձողներից մեկը Հ. Դավթյանն է. «Մխիթարյանների հիմնադրած դպրոցներից մեծ հռչակ ստացան 1834 թ. Իտալիայի Պադուա քաղաքի Մուրադյան և 1836 թ. Վենետիկի Ռափայելյան բարձրագույն դպրոցները: Այս դպրոցներում կարևոր տեղ էր հատկացվում ինչպես հումանիտար, այնպես էլ ճշգրիտ գիտություններին: Դասավանդողները բնականաբար պետք է հոգային գործնական գիտությունները դասագրքերը հրատարակելու մասին: Այդ առարկաների նյութը և աշակերտների գիտելիքների աստիճանը թելադրում էին, որ դասագրքերը գրվեն ու գասավանգվեն հասկանալի լեզվով: Այդ կարգի աշխատություն-

¹⁹ Ա. Թ. և ո ս յ ա ն. Հայ տրամաբանական միտքը XIX դարում. Երևան, 1976, էջ 18:

²⁰ Սուրբ Ղազար: Մայրավանք Մխիթարեան միաբանութեան. Վենետիկ, 1966, էջ 86:

ներ գրող հեղինակները բավականին մեծ թիվ են կազմում: Դրանցից են Իգնատիոս Փափազյանը, Խաչատուր Սյուրմելյանը, Սամվել Սամսարյանը, Եփրեմ Սեթյանը, Եղիա Թովմաճանյանը, Պետրոս Մինասյանը, Մեսրոպ Աղաչրադյանը և ուրիշներ: Քիմիայի և հանքաբանության մասնագետ Մ Աղաչրադյանին եվրոպացիները իսկ մատով էին ցույց տալիս»²¹:

Մ. Աղաչրադյանցի աշխարհայացքին հպանցիկ անդրադարձել է է. Հարուկյունյանը. «XIX դարի առաջին կեսին հայ իրականության մեջ Մ. Աղաչրադյանը զարգացնում է բնական իրավունքի առաջավոր տեսակետը: Բնական իրավունքների պահպանման պահանջը ուղղված էր ֆեոդալական միապետության, դասային կարգերի դեմ, նրա իրավական-քաղաքական և բարոյական նորմաների դեմ: Ազատ, անկախ և հավասար ծնված մարդիկ հասարակություն են կազմել, որպեսզի փոխադարձ օգնություն ավելի երջանիկ կյանք վարեն: Մարգու և հասարակության միջև ստեղծված դաշինքը կնքող կողմերի համար որոշակի օգուտ պետք է բերի, հասարակությունը պետք է ապահովի իր անդամների երջանկությունը, առաջին հերթին նրա բնական իրավունքները պահպանելու միջոցով: Մինչդեռ գոյություն ունեցող կարգը միանգամայն ոտնահարել է մարդու իրավունքները: Ճիշտ է, Աղաչրադյանը որոշակիորեն չի արտահայտվում գոյություն ունեցող այդպիսի կարգերի դեմ, բայց սա մի այնպիսի հետևություն է, որ կարող էր կատարել նրա աշխատության յուրաքանչյուր ընթերցող»²²:

Արժանին պետք է հատուցել Խորհրդային Հայաստանում կենսագրական բառարանագրության հիմնադրին բազմավաստակ հայագետ Գ. Ստեփանյանին՝ Մ. Աղաչրադյանցի, թեկուզ և չափազանց համառոտ կենսագրականը գիտական շրջանագրության մեջ դնելու համար²³: Ավելի ուշ, մեր ջանքերով «Հայկական համառոտ հանրագիտարանում» ևս փոքր-ինչ ավելի ընդարձակ ներկայացվեց Մ. Աղաչրադյանցի կյանքն ու գրագիտական գործունեությունը²⁴: Մ. Աղաչրադյանցի «Համառոտ արուեստաբանություն» գրքում եղած քիմիական գիտելիքներին առաջինն անդրադարձել ենք մենք մեր ուսումնասիրություններից մեկում²⁵: Շուրջ մեկ տասնամյակ անց մեր կենսագրական բառարաններից մեկում ներկայացրել ենք Մ. Աղաչրադյանցին, շեշտը դնելով նրա՝ Պրանսիայի հեղինակավոր գիտական ընկերություններից մեկի անդամ լինելու վրա²⁶:

Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների գործունեությունը շատերն են անդրադարձել՝ հայ և օտարազգի երևելի գործիչները: Գրվել են մենագրություններ, հոգվածներ հայերեն և օտար լեզուներով: Կարվեն նորերը: Դրանց մեջ, սակայն, չափազանց ուշագրավ է

²¹ Հ. Դ ա վ թ յ ա ն. Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը. Երևան, 1964, էջ 20:

²² է. Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն. Հայ փիլիսոփայական միտքը XIX դարի առաջին կեսին. Երևան, 1965, էջ 81:

²³ Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, էջ 70:

²⁴ Հայկական համառոտ հանրագիտարան. հ. 1, Երևան, 1990, էջ 126:

²⁵ Ա. Փ ա շ ա յ ա ն. XIX դարի քիմիական հայ բնագետների աշխատություններում. Երևան, 1992, էջ 35-38:

²⁶ Ա. Փ ա շ ա յ ա ն. Տիտղոսակիր հայեր. Երևան, 2001, էջ 29-30:

գրող, Հասարակական-քաղաքական գործիչ Ավետիս Ահարոնյանի տված գնահատականը Վենետիկի Մխիթարյան Հայրերին, որը, կարծում ենք, լիովին կարելի է վերագրել նաև Մեսրոպ վարդապետ Աղաչրաղյանցին. «Այս Համեստ մարդիկը, որոնց երիտասարդները ծերեր են և ծերերը՝ երիտասարդներ աշխատանքի մեջ, որոնք իրանց անհատականությունը հերքելու այդ զարմանալի կորովն ունեն և վառքը հեզնելու վսեմ Հպարտությունը, այս խեղճ կրոնավորները, որոնք գիտականներ են – (ընդգծումը մերն է – Ա. Փ), իրանց անցյալի շքեղ հորիզոնի վրա Մխիթարն ու Բագրատունին ունեին, իսկ աչքերի առաջ՝ Ալիշանը, – դեպի այդ մեծ դեմքերն են դիմում մի Համարյա ինքնաբույս մղումով, մի տեսակ բնագոյով, ուր փառասիրական ոչ մի նշույլ կարծես դեր չէ խաղում, և ձգտում են, որովհետև այլ կերպ վարվել չեն կարող, ինչպես որ մեղուն չէ կարող մեղրահայտ չհավաքել, թռչունը չէ կարող չերգել, ալիքները չեն կարող իրար չհրհրել»²⁷:

Վենետիկի Մխիթարյան միաբանության ականավոր Հայագետներից մեկը՝ երջանկահիշատակ Միքայել Չամչյանը 1805 թ., երբ 36-ամյա Մ. Աղաչրաղյանցը դեռևս դիտական ոչ մի գործ չհրապարակած սովորական վարդապետ-մանկավարժ էր, իր նամակներից մեկում կանխագուշակել էր նրա գիտական ապագան. «Կարծես թե (որպես իմացայ ի մէծն Տիւզեանց) ծառայութիւն եւս յանձնեսցի Հ. Մեսրոպին ի տէրութենէ. ի ներկայութեան արքայի՛ գուցէ Հրամայեսցի նմա՝ առնուլ տանել զմի յորդուց Տիւզեանց ի Գաղղիա, վասն ուսանելոյ անդէն քանի մի Հարկաւոր գիտելիս քիմիականութեան, ի դիւտ զանազան գաղտնեաց (մի՛ կարծէք զոսկւոյ, այլ զայլոց գիւտից). զի ընդարձակեալ է ընդունակութիւն սորա յոյժ յամենայն գիտելիս, եթէ ի յայտնիս և եթէ ի գաղտնիս, մանաւանդ Ֆիզիքական գիտութեանց և մաթեմատիկական մակածութեանց, առանց գնալոյ ընդ ճանապարհ նորոց: Աստղ բարձր է դորա, և ինքն եւս բարձրանայ. որում և մեզ արժան է նպաստել աղոթիւք, զի մնացէ ընդ Հովանավորութեամբ բարեբանեալ սուրբ Աստուածածնին»²⁸:

Մեծերը հազվադեպ են վրիպում...

НАУЧНОЕ НАСЛЕДИЕ МЕСРОПА АГАЧРАКЯНЦА

АСАТУР ПАШАЯН

Резюме

Впервые вниманию широкого круга читателей представлена биография, научно-педагогическая деятельность видного армянского естествоведа, педагога, переводчика, члена Венецианской конгрегации мхитаристов Месропа Агачракянца (1769–1845). Он родился в Константинополе. Образование получил в

²⁷ Ա. Ա հ ա ռ ո ն ե ա ն. Մխիթարեան միաբանութիւնը. Թիֆլիս, 1901, էջ 13:

²⁸ Բ. Ս ա թ դ ի ս ե ա ն. նշվ. աշխ., էջ 351:

школе при монастыре конгрегации мхитаристов в Венеции, на острове св. Лазаря. В конце XVIII в. вернулся в Константинополь, где основал химическую лабораторию и вел курс по естественным наукам. В 1810 г. Агачракиянец был избран членом французского императорского совета по минералогии. В 1819 г. в Венеции был издан труд Агачракиянца "Естественный закон", в котором его мировоззрение освещено с позиций деизма. Фундаментальным трудом Агачракиянца является изданная на ашхарабаре монография "Краткое ремесловедение" (1830 г., 244 стр.), в которой освещены вопросы прикладной химии, сельского хозяйства и некоторых ремесел. Агачракиянец перевел на армянский язык (грабар) монографию французского философа и логика Д. Марсе "Краткая логика" (1845 г.).

SCIENTIFIC HERITAGE OF MESROP AGHACHRAGHIANTS

ASATUR PASHAYAN

S u m m a r y

The article presents the biography, scientific-pedagogical activity of the prominent Armenian scientist, teacher, translator, member of the Mekhitarist Congregation in Venice Mesrop Aghachraghiants (1769-1845). He was born in Constantinople. M.Aghachraghiants was educated at monastery school of the Mekhitarist Congregation in Venice, on the island of St. Lazarus. At the end of the 18th century M.Aghachraghiants returned to Constantinople, established a chemical laboratory and taught a course on natural sciences. In 1810 he was elected a member of the French Imperial Council on Mineralogy. In 1819 Aghachraghiants published a book named "Natural Law", in which his world outlook was elucidated from the position of deism. Aghachraghiants' fundamental work is his "Brief Art of Handicraft", a monograph, published in Ashkharabar (1830, 244p.), where questions of applied chemistry, agriculture and some trades are elucidated. He also translated into Armenian(Grabar) French philosopher and logician D.Marse's monograph "Brief Logic" (1845).